

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ**

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
1.1 Համակարգի նպատակը և կիրառման ակնկալվող արդյունքը	3
1.2 Համակարգի շահառուները	3
2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ	4
2.1 Համակարգի հնարավորությունները	4
2.2 Համակարգի իրականացումը	7
2.2.1 Էլեկտրոնային գրասենյակի հնարավորությունները	7
2.2.2 Ընդհանուր հայցային վարույթ	12
2.2.2.1 Հայցադիմումի ստեղծում	12
2.2.2.2 Գործի ընդունումը վարույթ	20
2.2.2.2.1 Նախապատրաստական փուլ	21
2.2.2.3 Դատաքննություն	34
2.2.2.4 Եզրափակիչ փուլ	35
2.2.3 Գործի քննումը պարզեցված վարույթով	37
2.2.4 Արագացված դատաքննության կիրառում	38
2.2.5 Հատուկ վարույթներ	38
2.2.6 Հատուկ հայցային վարույթներ	40
2.2.7 Վերաքննիչ բողոք	42
2.2.8 Վճռաբեկ բողոք	43
2.2.9 Դիմում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու մասին	45
2.2.10 Դիմում արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ	49
2.2.11 Դիմում օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ	49
2.2.12 Դիմում ֆինանսական հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ	50
2.2.13 Դիմում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ	50
2.3 Հիմնական ֆունկցիոնալ մոդուլները	50
2.3.1 Գործերի ինքնաշխատ եղանակով մակագրում և բաշխում	50
2.3.2 Տեսաձայնային հեռահաղորդակցման ենթահամակարգ	50
2.3.3 Նիստերի նշանակման ենթահամակարգ	52
2.3.4 Նիստերի արձանագրման ենթահամակարգ	52
2.3.5 Ծանուցումների ենթահամակարգ	53

ՆԱԽԱԲԱՆ

«Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ»-ի շրջանակներում մշակվել է Էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ Համակարգ), որը ապահովում է քաղաքացիական գործերի էլեկտրոնային եղանակով հարուցումը, քննությունը, լուծումն ու բողոքարկումը, ինչպես նաև դատավարական գործողությունների հետ կապված դատարանի կողմից արդյունավետ կառավարման հնարավորությունները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և այլ իրավական ակտերի:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Համակարգի նպատակը և կիրառման ակնկալվող արդյունքը

Համակարգի հիմնական նպատակն է «Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ»-ի միջավայրում և շրջանակներում թվայնացնել և ավտոմատացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված քաղաքացիական գործերի հարուցման, քննության, լուծման ու բողոքարկման բոլոր գործընթացները:

Կիրառման ակնկալվող արդյունքը: Վերոհիշյալ գործիքակազմի կիրառման արդյունքում քաղաքացիական դատավարության գործընթացների ավտոմատացումը հանգեցնելու է կայացվող որոշումների (վճիռների) ժամկետների ճկուն կառավարմանը և դատավարական գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

1.2 Համակարգի շահառուները

Մշակված էլեկտրոնային համակարգի շահառուներն են՝ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը և դատական դեպարտամենտը, ՀՀ դատական համակարգը և դատավորները, ՀՀ արդարադատության նախարարությունը, ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ փաստաբաններ, փորձագետներ, թարգմանիչներ, սնանկության կառավարիչներ և արտոնագրված հաշտարարներ) ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

2.1 Համակարգի հնարավորությունները

Համակարգը կառուցվել է այնպես, որ հնարավորություն տա էլեկտրոնային եղանակով ապահովելու առաջին ատյանի ընդհանուր իրավասության, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների քաղաքացիական գործերի՝ էլեկտրոնային եղանակով հարուցումը, քննությունը, լուծումը և բողոքարկումը՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի:

Համակարգի կարողությունները համահունչ են ՀՀ դատական համակարգի ծանրաբեռնվածության քանակական և որակական ցուցանիշներին:

Համակարգը ապահովում է գործողությունների իրականացումից բխող փաստաթղթաշրջանառությունը՝ հիմք ընդունելով օրենսդրությամբ սահմանված հասկացությունները, գործողությունների իրականացման շղթան և տրամաբանությունը, ինչպես նաև իրականացվել են ներքոնշյալ գործառույթների իրականացումը՝

- դատավարական ժամկետների հաշվարկման և դրանց մասին իրազեկման հատուկ համակարգ, ինչպես նաև տվյալներն ավտոմատացված գեներացնելու միջոցով դատարանի կողմից կազմվող դատավարական փաստաթղթերի և դրանք հասցեատիրոջն ուղարկելու գործիքակազմ՝

- համապատասխան անձանց կողմից մուտքագրված տվյալների հիման վրա փաստաթղթերի ինքնաշխատ գեներացումը,

Բաղաքացիական

Գլխավոր Ծանուցումներ 258 3/23

Իմ գործերը

Ընդունել վարույթ

← Վերադարձ

Տվյալներ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՌԿՁԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՐԱՆ

ՇԵՆԳԱՎԻԹ Ն.

(ՀՀ, համայնք երեւան, Շենգավիթ, ԱՐԵՎԻԿԱ)

ՈՐՈՇՈՒՄ

Վարույթ ընդունելու մասին

Գործ N 20 Հունվար 2023թ.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Դավիթ Բալայան), ծանոթանալով Բիբլոս ՓԲԸ-ի, ընդդեմ Նոր բանկ Ա/Ձ-ի, հայցադիմումին

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2008թ. որոշումով բեկանվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2-1361 քաղաքացիական գործով ըստ հայցի Արաքսի Սարյանի ընդդեմ 'ՄԱՊ' փակ բաժնետիրական ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործումն առօրինակում և կոնտրաֆակտի օգտագործումն առաջարկված եկամուտները

Գործը մակագրվել է Լոռ

20/01/2023 13:06

Հայտնում ենք, որ Ընդհանուր հայցային վարույթը մակագրվել է Ձեզ: ...

Գործը մակագրվել է Լոռ

20/01/2023 12:35

Հայտնում ենք, որ Ընդհանուր հայցային վարույթը մակագրվել է Ձեզ: ...

Գործը մակագրվել է Լոռ

20/01/2023 12:33

Բոլոր ծանուցումները

Նշել բոլորը կարդացած

QR code

- փաստաթղթերի ներբեռնումը, վերբեռնումը, ստեղծումը, փոխանցումը, շրջանառությունը, իրավագոր անձանց համար հասանելիությունը, ինչպես նաև՝ Համակարգում համապատասխան փաստաթղթերի ձևանմուշների առկայությունը և դրանց օգտագործումը,
- ստեղծված կամ վերբեռնված փաստաթղթի ստորագրումը՝ էլեկտրոնային թվային ստորագրության միջոցով,

- դատական նիստերի արձանագրությունների ձայնագրման և համառոտագրման միջոցով գեներացումը և արխիվացումը՝ համաձայն կիրառելի օրենսդրության,
- դատարանների և այլ մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տեղեկատվության փոխանակման և հաղորդակցության ապահովումը, այդ թվում՝ ինքնաշխատ եղանակով հարցումների կատարումը և հարցումների պատասխանների ստացումը, որը իրականացվում է ներքին գործառնությունների և միջգերատեսչական փաստաթղթաշրջանառության ավտոմատացման Mulberry համակարգի միջոցով,
- օրենսդրությամբ նախատեսված դատավարական փաստաթղթերի ներկայացումը և դատական ակտերի կայացումը,
- գործերի ինքնաշխատ մակագրումը և ինքնաշխատ բաշխումը դատավորների միջև,
- տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով դատական նիստերի իրականացումը,
- ինքնաշխատ և ոչ ինքնաշխատ ծանուցումների ուղարկումը համապատասխան անձանց, էլեկտրոնային ծանուցումների պատշաճ իրականացումը:

Ծանուցում



ԱՐԱԴ/0001/03/23 Վճարման կարգադրություն արձակելու մասին որոշում

17/01/2023 14:38

Համակարգային ծանուցում: Ռ Ուղարկված / 17/01/2023 14:38

Հայտնում ենք, որ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող ԱՐԱԴ/0001/03/23 գործում 17/01/2023թ-ին կայացվել է Ո-ԱՐԱԴ/0001/03/23-1 Վճարման կարգադրություն արձակելու մասին որոշում:

ԱՐԱԴ/0001/03/23 Վճարման կարգադրություն արձակելու մասին որոշում

17/01/2023 14:38

Հայտնում: Ս Ապասման մեջ է / 17/01/2023 14:38

Հայտնում ենք, որ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող ԱՐԱԴ/0001/03/23 գործում 17/01/2023թ-ին կայացվել է Ո-ԱՐԱԴ/0001/03/23-1 Վճարման կարգադրություն արձակելու մասին որոշում:

ԱՐԱԴ/0001/03/23 Վճարման կարգադրություն արձակելու մասին որոշում

17/01/2023 14:38

Էլ. հասցե: Ռ Ուղարկման սխալ / 17/01/2023 14:38

Էլ. հասցեն բացակայում է

Հայտնում ենք, որ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող ԱՐԱԴ/0001/03/23 գործում 17/01/2023թ-ին կայացվել է Ո-ԱՐԱԴ/0001/03/23-1 Վճարման կարգադրություն արձակելու մասին որոշում:

Ուղարկող: Աշտարակի նստավայր, Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Ստացող: Սամվել Հովսեփյան (Պարտապան)

- Համակարգի միջոցով կատարված գործողությունների էլեկտրոնային գրանցամատյանի ինքնաշխատ ձևավորումը:

Բաղաքացիական									
Որոշում									
Հ/հ	Գործի համար	Վարույթի տեսակ	Վարույթի ենթատեսակ	Ներկայացման ամսաթիվ	Դիմումի համար	Կողմեր	Դատավոր	Դատարան	Կա
1		Արդիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում		17/07/2023 11:14	Դիմում/0236/23	Դիմող՝ ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա , ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա Պատասխանող՝ Ֆասթ Կոնդիտ Կապիտալ ՌԻԷԿ ՓԲԸ	Ալեքսեյ Մաքսիմի	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան , Աջափնյակ-2 նստավայր	Հա
2		Ընդհանուր հայցային վարույթ		17/07/2023 11:06	Դիմում/0235/23	Հայցվոր՝ ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա Պատասխանող՝ ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ	Ալեքսեյ Մաքսիմի	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան , Աջափնյակ-2 նստավայր	Սա
3		Արդիտրաժի վճիռը կատարման համար կատ. թերթ տրամադրելու		17/07/2023 11:01	Դիմում/0234/23	Դիմող՝ ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա , ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա Պատասխանող՝ ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ	Ալեքսեյ Մաքսիմի	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	Գոր

- վիճակագրական տվյալների հավաքագրումը և հրապարակումը միասնական հարթակում:

2.2 Համակարգի իրականացումը

2.2.1 Էլեկտրոնային գրասենյակի հնարավորությունները

Համակարգի տիրույթները

Համակարգն ունի երկու տիրույթ՝ արտաքին և ներքին: Յուրաքանչյուր տիրույթ մուտք գործելու հնարավորությունը կախված է օգտատիրոջ իրավասություններից: Համակարգի արտաքին տիրույթը հասանելի է հանրությանը, իսկ ներքին տիրույթը մուտքի հնարավորություն ունեցող անձանց շրջանակը կարգաբերվում է Համակարգի ադմինիստրատոր(ներ)ի կողմից:

Անձը դատավորի կարգավիճակով կարող է մուտք գործել Համակարգ միայն ներքին տիրույթում նույնականացվելու միջոցով: Արտաքին տիրույթում նույնականացվելու դեպքում դատավորը հանդես է գալիս որպես սովորական քաղաքացի և կարողանում է կատարել այն գործողությունները, որոնք կատարվում են քաղաքացիների կողմից (օրինակ՝ ներկայացնել հայց, տեսնել այն գործերի ցուցակը, որով նա ներգրավված է, որպես գործին մասնակցող անձ և այլն):

Մուտքը համակարգ և նույնականացումը

Անձնական գրասենյակ մուտք գործելը հնարավոր է nID նույնականացման եղանակով, ինչպես նաև մուտքանունի ու գաղտնաբառի միջոցով:


Էլեկտրոնային քաղաքացիական դատավարություն

Եթե ունեք Անուն և Գաղտնաբառ,
լրացրեք համապատասխան տողերում
և սեղմեք << Մուտք >> կոճակը

Անուն

Գաղտնաբառ

Մուտքագրեք նկարի տեքստը

Մուտք

Եթե չունեք Անուն և գաղտնաբառ,
մուտք գործեք nID համակարգի միջոցով՝
սեղմելով << Մուտք >> կոճակը



(խնդրում ենք օգտվել Google Chrome դիտարկիչից)

Մուտք

Մինչև 2 միլիոն դրամ պահանջով դիմում ներկայացնելու համար անցեք հետևյալ հղումով՝ www.e-notary.am

Երկու եղանակով էլ մուտք գործելու դեպքում իրականացվում է մուտք գործող անձի ամբողջական նույնականացում և հասանելիություն անձնական գրասենյակին:

Անձնական գրասենյակից ամեն առանձին գործով որոշակի գործողություններ կատարելիս՝ անձը կարող է ընտրել դրանք կատարել իր կամ այլ անձի անունից՝ որպես ներկայացուցիչ:

Գրասենյակի նվազագույն հնարավորությունները

Համակարգի արտաքին տիրույթում գրանցվելու դեպքում յուրաքանչյուր անձ տեսնում է հետևյալ տեղեկությունները.

- այն բոլոր գործերի ցանկը, որոնցում նա ունի որևէ կարգավիճակ,
- յուրաքանչյուր գործով տվյալ անձին տրված կարգավիճակը,
- տվյալ քաղաքացիական գործը քննող դատարանի անունը,
- տվյալ քաղաքացիական գործը քննող դատավորը,
- տվյալ քաղաքացիական գործով ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի առկայության մասին տվյալները:

Արտաքին տիրույթի օգտատերարի էլեկտրոնային գրասենյակի միջոցով հնարավոր է կատարել հետևյալ գործողությունները.

- ծանոթանալ սեփական անձնական տվյալներին և խմբագրել դրանց որոշակի մասը,

The screenshot displays the 'My Personal Data' (Մենձնական էջ) section of a web application. The left sidebar contains navigation links for 'My Claims' (Գործերի պոռտֆոլիո), 'My Address' (Իմ գործերը), 'My Address' (Քաղ. դիմումներ), 'My Address' (Փաստաթղթեր), 'My Address' (Դատական ծախսեր), 'My Address' (ԱՅԼ), 'My Address' (Օրացույց), 'My Address' (Կարգավորումներ), 'My Address' (Մենձնական էջ), and 'My Address' (Ծանուցումներ). The main content area shows a list of claims (claim 1, claim 2, claim 3) with fields for 'Claimant' (Հասցե*) and 'Claimant's address' (Հասցեի տեսակ*). Each claim entry includes a dropdown for 'Claimant's address type' (Հասցեի տեսակ*) and a button 'add_address'. The claims are listed with their respective addresses and claim numbers.

- ստեղծել և ներկայացնել դատավարական փաստաթղթեր, պահպանել սևագրություններ՝

- կատարել անձնական տվյալների՝ հեռախոսահամարի, էլ. հասցեի, ծանուցումների նախընտրելի տարբերակի և գաղտնաբառի փոփոխություններ:

Էլեկտրոնային Դատավարչություն

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

258

Գլխավոր / Փաստաթղթեր

Փաստաթղթեր

Որոշում

	Հ/Հ	Փաստաթղթի անվանում	Նկարագրություն	Ամսաթիվ
+	1			
-	2	Հայցադիմում		
		 Հայցադիմում		
		 signed.pdf		
-	3	Որոշում		
		 Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին Ո-1		
		 2.pdf		
+	4	Որոշում		
+	5	Որոշում		

Օգտատերերի Էլեկտրոնային գրասենյակների արտաքին տեսքը և բաղադրիչները ունեն հնարավորինս պարզ և մատչելի տեսք: Յուրաքանչյուր քաղաքացիական գործի համար անձը տեսնում է այն գործողությունների ցանկը, որոնք տվյալ պահին հասանելի են նրան: Հասանելի գործողությունները կախված են անձի կարգավիճակից, գործի բնույթից և վարույթի կարգավիճակից:

Յուրաքանչյուր օգտատիրոջ տեսակի համար սահմանված են տեղեկատվական համապատասխան ռեսուրսները, որոնց տվյալ օգտատերը հասանելիություն ունի համաձայն ադմինիստրատորի կողմից իրեն հատկացված իրավունքների (user rights):

Ձախ մենյուից ընտրելով «Քաղաքացիական» կետը՝ աջ պատուհանում օգտատերը կարող է տեսնել այն գործը, որտեղ նա հանդիսանում է կողմ:

Էլեկտրոնային քաղաքացիական

Թեստային համակարգ

Գլխավոր / Իմ գործերը / Քաղաքացիական

Քաղաքացիական

Ավելացնել

Որոշում

Հ/հ	Գործի համար	Վարույթի տեսակ	Ներկայացման ամսաթիվ	Դիմումի համար	Կողմեր	Դատավոր	Դատարան	Կարգավիճակ
1		Ընդհանուր հայցային վարույթ	08/01/2024 11:25	Դիմում/0002/24	Հայցվոր՝ Սրբոյր Գագիկի Սևրույան Պատասխանող՝ ՄՈՅԱՆԺ ՍԴԸ Երրորդ անձ՝ ՄՐԳՈ ՌԻՎԿ ՍԴԸ	Ալֆրեդ Սևաքյանի Վարդանյան, Նարինե Տարինյի Բաբունյան, Նարինե Աշոտի Գաբրիելյան, Սամվել Լևոնի Գրիգորյան, Արսեն Սամվելի Սևրույան, Գրո Գագիկի Հակոբյան, Էդգար Սեդրակյան, Սերգեյ Սեդրյան	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, Կենտրոնի քաղաքացիական դատարան, Կենտրոնի քաղաքացիական դատարանի քաղաքացիական սպասարար	Վեճից մտել է օրինական ուժի մեջ

Մկնիկով նշելով նախընտրած գործի տողը՝ աջ պատուհանում բացվում են այդ գործին վերաբերվող մենյուները: «Հիմնական» մենյուի մեջ արտացոլվում է տվյալ քաղաքացիական գործին վերաբերվող հիմնական տեղեկատվությունը:

Հիմնական

ԵԴ/14091/02/24

Հայտարար

Հարցվող

Քիչուս ՓԲԸ

ՀՀՀՀ 01505323 Գրանցման համար 72 26/04/1996 (Ունեկցիներ տ)

Փաստաթուղթ հայցի՝ ՀՀ, ԼՂԴՀ, համադր ԳՆԵՂ, ԳՆԵՂ, 1 ֆ., քմ 1

Փաստաթուղթ

- Էրիկ Առաքելյան (Ունեկցիներ տ)

Քաղաքացիական հայցի՝ ՀՀ, համադր ԵԴ/14091/02/24, ԼՂԴՀ, ԼՂԴՀ, 1 ֆ., քմ 2, 43

«Գործողություններ» մենյուն ընտրելիս՝ աջ պատուհանի ձախ կողմում զետեղվում են օգտատիրոջ կողմից կատարված գործողությունները: Այդ պահին դիտման համար ընտրած գործողությունը նշվում է կանաչ շրջանով, ընդ որում գործողության (օրինակ՝ ընդունված որոշման) տեքստը պատկերվում է կողքը՝ աղյուսակի մեջ: Նախորդ գործողություններով կայացրած որոշումների տեքստերը նույնպես կարելի է նշել և դիտել, մկնիկով սեղմելով կատարված գործողության հղման վրա:

Հիմնական

ԵԴ/14091/02/24

Հիմնական

Գործողություններ

Այլ հայցեր

Պատասխան

Դիմումներ

Նիստեր

Ներկայացնել դիմում/միջնորդություն

Admin Super 20/01/2024 16:20

Պատասխան

Admin Super 20/01/2024 16:19

Վարույթ ընդունելու մասին որոշում

Admin Super 20/01/2024 16:19

Մակագրել

20/01/2024 16:18

Ներկայացնել դիմում/միջնորդություն

Համար	Մ-2
Ներկայացման ամսաթիվ	20/01/2024
Բովանդակություն	ատ
Միջնորդության տեսակը	Ապացույց պահանջելու վերաբերյալ միջնորդություն

Ներկայացնող անձ

Մարտյան Սրբող Գագիկի (Պատասխանող)

Քննարկել

Դատական ծախսերի վճարում

Դատավորին հայտնել բացարկ

Հայտնել դիմում

Ներկայացնել ապացույց

Ներկայացնել դիմում/միջնորդություն

Նոր ներկայացուցիչ ներգրավել

Նոր վստահության ներգրավել

Իսկ աջ կողմում ներկայացված են գունավոր կոճակների տեսքով այն գործողությունները, որոնք կողմը կարող է կատարել տվյալ պահին:

«Այլ հայցեր» մենյուից հասանելի են կողմերի ներկայացրած հակընդդեմ հայցերը կամ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի հայցերը, որոնց վերաբերյալ դատավորը կարող է կայացնել համապատասխան որոշումներ:

«Պատասխան» մենյուի մեջ աղյուսակային տեսքով ներկայացվում է պատասխանողի կողմից ներկայացվող պատասխանը:

Մկնիկով սեղմելով աղյուսակի տողի վրա՝ բացվում է պատասխանի մանրամասները պատկերող պատուհան:

«Դիրքորոշումներ» մենյուի մեջ աղյուսակային տեսքով ցուցադրվում են կողմերի ներկայացրած դիրքորոշումները:

Մկնիկով սեղմելով աղյուսակի տողի վրա՝ բացվում է դիրքորոշման մանրամասները պատկերող պատուհան:

«Նիստեր» մենյուն ցույց է տալիս նշանակված դատական նիստերի օրերը: Այստեղ կարելի է իրականացվել տեսաձայնային հեռահաղորդակցումը կողմերի և դատավորի միջև:

2.2.2 Ընդհանուր հայցային վարույթ

2.2.2.1 Հայցադիմումի ստեղծում

Օգտատերը մուտք գործելով իր էլեկտրոնային կաբինետ՝ կարող է ստեղծել Համակարգում իր էլեկտրոնային հայցադիմումը:

Մուտք գործելով համակարգ՝ օգտատերը ընտրելով ձախ մենյուի «Իմ գործերը» --> «Քաղաքացիական» կետը, սեղմում է «Ավելացնել» կանաչ կոճակը: Այնուհետև բացված պատուհանում ընտրում է վարույթի տեսակը, դատարանը և սեղմում «Ստեղծել հայցադիմում» կոճակը:

Այնուհետև հայցադիմումի ստեղծումը շարունակվում է ներքոհիշյալ քայլերի միջոցով:
Քայլ 1-ում օգտատերը ավելացնում է հայցվոր, պատասխանող: Հնարավոր է ավելացնել նաև 3-րդ անձ և իրավասու անձ (մարմին):

Հայցվոր ավելացնելիս՝ անհրաժեշտ է լրացնել նրա տվյալները:

Ավելացնել հայցվոր

☒ Ֆիզիկական անձ ☐ Իրավաբանական անձ ☐ Բանկ

Անուն*

Արթուր

*Պետք է պարունակի հայերեն տառեր

Ազգանուն*

Մկրտչյան

*Պետք է պարունակի հայերեն տառեր

Հայրանուն*

Գազիկի

*Պետք է պարունակի հայերեն տառեր և լինի հղովված ձևով

☐ Հայրանունը բացակայում է

Ծննդյան ամսաթիվ



25/02/1992

ՀԾՀ*

*Պետք է պարունակի 10 թիվ

☐ ՀԾՀ առկա չէ

☒ Ռեզիդենտ

Ռեզիդենտ նշումը կատարում եք, եթե Դուք Հայաստանի Հանրապետության քաղաքացի եք:

Անձի ինքնությունը հավաստող փաստաթուղթ

Փաստաթղթի տեսակ*

Նույնականացման քարտ

Նույնականացման քարտի համար*

008850877

Ում կողմից է տրված*

036

*Պետք է պարունակի 3 թիվ

Տրման ամսաթիվ*



02/10/2017

Վավերական է մինչև



02/10/2027

Լրացվում են նաև հասցեն, կոնտակտային տվյալները, ծանուցման էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ փաստաբանի և 3-րդ անձի տվյալները:

Նույն կերպ մուտքագրվում են պատասխանողի տվյալները:

Կողմերի տվյալները մուտքագրելիս համակարգը ավտոմատ ստուգում և վավերացնում է այն ՀՀ Ոստիկանության անձնագրային բաժնի և ՀՀ ԱՆ կազմակերպությունների ռեգիստրի հետ:

Իրավաբանական անձի օրինակով ստորև բերված է պատասխանողի մուտքագրման գործողությունները:

Բացի անվանումից մուտքագրվում են նաև կազմակերպական-իրավական ձևը, ՀՎՀՀ, պետական գրանցման համարը, գրանցման ամսաթիվը: Հասցեն մուտքագրելիս հնարավոր է ընտրել առկա հասցեները ցանկից կամ ավելացնել նորը: «Հասցեի տեսակը» ցանկում նշվում է բնակության, հաշվառման, ծանուցման կամ գործունեության հասցեն: «Կազմակերպության կոնտակտները» բաժնում մուտքագրվում են (ոչ պարտադիր) կազմակերպության հեռախոսահամարն ու էլ. հասցեն: Ինչպես և ֆիզիկական անձի դեպքում, հնարավոր է, անհրաժեշտության դեպքում, մուտքագրել փաստաբանի և այլ ներկայացուցչի տվյալները:

Ֆիզիկական անձ

Իրավաբանական անձ

Բանկ

Անվանում*

ՄՈՅԱԺ

Կազմակերպական-իրավական ձև

ՍՊԸ

Լրացնել առանց չափերտների և կազմակերպական-իրավական ձևի (ՍՊԸ, ՓԲԸ, ...)

ՀՎՀՀ

Պետական գրանցման համար

271.110.1104922

Գրանցման ամսաթիվ

25/01/2024

Պետք է պարունակի 8 թիվ

☒ Ռեզիդենտ

Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ կամ օտարերկրյա կազմակերպության մասնաճյուղ

Հասցե

Հասցե

Հասցե*

Հասցեի տեսակ*

Կազմակերպության կոնտակտներ

ՀՀ, ԼՈՌԻ, համայնք ԴՍԵՂ, ԴՍԵՂ, 1 Փ., տուն 1

Ընտրել առկա հասցեներից կամ ավելացնել նորը

Ընտրել


Ընտրել մեկ կամ ավելի հասցեի տեսակ

Ավելացնել հասցե

+


×

Քայլ 2-ում օգտատերը ազատ տեքստային ոճով նկարագրական մասում համակարգ է մուտքագրում հայցադիմումի էությունը:



Քայլ 3-ի «Փաստական հիմք» տեքստային դաշտում ավելացվում են փաստական հիմքերը: Այս քայլում օգտատերը լրացնում է ըստ դատավարության օրենսգրքի հայցադիմումի պատճառաբանական մասը, որն իր հերթին բաղկացած է փաստական հիմքերից և ամեն մի փաստական հիմքին կցված ապացույցներից: «Ավելացնել փաստ» կոճակի օգնությամբ օգտատերը կարող է ավելացնել «Փաստական հիմք 2», «Փաստական հիմք 3» և այլն:

Ներքևում նույն եղանակով ավելացվում են իրավական հիմքերը:



Ամեն մի փաստական հիմքի մեջ օգտատերը կարող է շարադրել հիմքեր և հիմնավորումներ, որոնց համար աջ ներքևի մասում գտնվող «Կցել ապացույց» կոճակի միջոցով նա կարող է կցել ապացույցներ:

Այդ դեպքում բացվում է համապատասխան պատուհան, որտեղ օգտատերը ընտրում է ապացույցի տեսակը, տալիս է նկարագրություն և վերբեռնում ֆայլեր: Այս գործողությունները կատարելուց հետո օգտատերը սեղմում է «Հաստատել» կոճակը և մուտքագրված ապացույցը կցվում է համապատասխան փաստական հիմքին: Այնուհետև օգտատերը սեղմում է «Հաջորդ» կոճակը և անցնում «Քայլ 4» եզրափակիչ մասին:

Քայլ 4-ում լրացվում է պահանջի բովանդակությունը:

[illegible]

«Ավելացնել պահանջ» կոճակով կարող է ավելացվել մի քանի պահանջ: Ամեն մի պահանջի համար մուտքագրվում է պահանջի բովանդակությունը և պատասխանողը, որը ընտրվում է ներածական մասում մուտքագրված պատասխանողների ցուցակից: Օգտատերը կարող է մուտքագրել մի քանի պահանջներ, որոնց պատասխանող կողմերը կարող են լինել տարբեր անձինք:

«Քայլ 5»-ում մուտքագրվում են միջնորդություններ, կցվում գործին վերաբերվող այլ փաստաթղթեր, կատարվում են դատական ծախսերի վճարումները:

Եթե պետական տուրքի վճարման իրականացում այս փուլում չի նախատեսվում, ապա անհրաժեշտ է ներկայացնել պետական տուրքի հետաձգման վերաբերյալ միջնորդություն: Իսկ պետական տուրքից ազատված լինելու դեպքում կատարվում է համապատասխան ընտրություն ներքևի մասում:

«Ավելացնել միջնորդություն» կոճակով կարելի է ավելացնել միջնորդություններ, որոնք ավտոմատ կցվում են հայցադիմումին:

«Ավելացնել միջնորդություն» կոճակը սեղմելով՝ բացվում է ներկայացված պատուհանը, որտեղ օգտատերը՝

- ընտրում է միջնորդության տեսակը,
- ընտրում է ամսաթիվը,
- մուտքագրում միջնորդության բովանդակությունը,
- կցում միջնորդությանը վերաբերող փաստաթղթեր,
- ավելացնում միջնորդության պատասխանը պատասխանողին ուղարկելը հավաստող ապացույց:

Հարկ է նշել, որ ցանկացած պահին հայցվորը վերոհիշյալ քայլերի ընթացքում կարող է սեղմել վերևի աջ անկյունում գտնվող «Հիշել որպես սևագիր» կոճակը և դուրս գալ համակարգից՝ հետագայում վերադառնալու և շարունակելու նպատակով: Հայցվորը կարող է նաև ցանկացած պահին չեղյալ համարել լրացրած տվյալները, սեղմելով «Չեղարկել սևագիրը» կոճակը:

Ավելացնել միջնորդություն

Տեսակ *

Գործի մի մասը դոնփակ նիստում քննելու վերաբերյալ միջնորդություն

Ավելացնել

Համար*

Մ-1

Ներկայացման ամսաթիվ*

25/01/2024

Բովանդակություն*

GHEA Grapalat

A

B

I

U

18

T!

</>

* Ներկայացնող անձ

Մկրտչյան Արթուր Գագիկի (Հայցվոր)

Միջնորդության պատճենը պատասխանողին(պարտապանին) ուղարկելը հավաստող ապացույց

Փաստաթղթի անվանում

Ամսաթիվ

Փաստաթղթերի մեջ «Ավելացնել» կոճակով օգտատերը հայցադիմումին կարող է կցել գործին վերաբերող ցանկացած փաստաթուղթ:

«Ավելագնել» կոճակը սեղմելով բացվում է պատուհան, որտեղ օգտատերը՝

- մուտքագրում է գործին վերաբերող ցանկացած փաստաթղթի անվանում,
- ընտրում է ամսաթիվը,
- վերբեռնում է փաստաթղթի ֆայլերը:

Ստեղծել նոր փաստաթուղթ ×

Փաստաթղթի անվանում

Ամսաթիվ

☒ Հաստատում եմ, որ կցված փաստաթղթերը բնօրինակն են կամ պատշաճ վավերացված պատճեն



Բեռնել ֆայլեր

Դուք կարող եք բեռնել .jpeg, .jpg, .png, .pdf, .doc, .docx, .mp4, .webm, .xlsx, .xls ֆորմատի ֆայլեր, առավելագույնը 5 ֆայլ, յուրաքանչյուրը ոչ ավել, քան 10 MB

[Հիշել](#) [Չեղարկել](#)

«Քայլ 5»-ում դատական ծախսերի բլոկի մեջ «Վճարել» ընտրելիս բացվում է պատուհան, որի միջոցով իրականացվում է վճարումը: Կամ կարելի է այդ փուլում հետաձգել վճարումը՝ սեղմելով «Ներկայացնել միջնորդություն պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ» կոճակը:



Էլեկտրոնային
քաղաքացիական
դատարան

Գործերի ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իմ գործերը

Քաղաքացիական

Քաղ. դիմումներ

Դատական ծախսեր

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Անձնական էջ

Ծանուցումներ

Թեստային համակարգ

Ներկայացնել միջնորդություն պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ

Դատական ծախսեր

☐ Ազատված եմ պետ. տուրքից

☒ Վճարել

ԱՅՍՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՏԱՐԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄ:

Գումարի չափը*

Իսկողում ենք մուտքագրել այլ վճարային համակարգերով կատարած վճարումների ծածկագիրը կամ վճարել առցանց և մուտքագրել ծածկագիրը :

Ծածկագիր*

Վճարման ծածկագիրը բացակայում է

[Նախորդ](#) [Հաջորդ](#)

© 2019 Էլեկտրոնային քաղաքացիական դատարանություն

Պատրաստված է Masys Information Systems

Կողմը կարող է նաև, ունենալով իրավական հիմքեր, ընտրել «Ազատված եմ պետ. տուրքից» և վճարում չկատարել:

Հանրային Կառավարման

Գործերի ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իմ գործերը

Քաղաքացիական

Քաղ. դիմումներ

Դատական ծախսեր

ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆԵՐ

Անձնական էջ

Ծանուցումներ

Քայլ 1 Ներածական

Քայլ 2 Նկարագրական

Քայլ 3 Պատճառարան...

Քայլ 4 Եզրակակից

Քայլ 5 Այլ

Քայլ 6 Խմբագրել

Վերականգնել սկզբնական տեսքը

Խմբագրել

GHEA Grapalot

25/01/2024թ.

ՀԱՅՏՎՈՐ

Արթուր Գազիկի Մկրտչյան

Քննարկման Հաշվառման Գործունեության հասցեն՝ ՀՀ, ԿՐՏԱՅՔ, համայնք ԼԵՐՆԱՆԻՍ, ԼԵՐՆԱՆԻՍ, 4 ԹՂՄ., տուն 29

Նույնականացման թաղո՝ 008850877 տրված՝ 02/10/2017 թ., 036 կողմից, վավերական է՝ 02/10/2027

Ներկայացուցիչ՝

Փաստարան Մարինա Հայկի Մխիթարյան

Հաշվառման հասցեն՝ ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱԿԱՆ, ՄԱՅԱԿ, շենք 2

Այլ փաստաթուղթ՝ 111111 տրված՝ 01/10/2023 թ., 101 կողմից, ժամկետով՝ 03/10/2023

ՊԱՏԱՍԽԱՆՈՐ

ՄՈՅԱՆԺ ՄՊԸ

Հաշվառման Քննարկման հասցեն՝ ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԹԻՒՆԱՆՅԱՆ Փ., տուն 18Ա

Պետ. գրանցման համար՝ 271.110.1104922

ՀՎՀՀ՝ 01297338

«Քայլ 6»-ում Համակարգը ցույց է տալիս բոլոր քայլերի արդյունքում ստացված էլեկտրոնային հայցադիմումը, որը կարելի է այստեղ խմբագրել:

Համակարգի կողմից գեներացված էլեկտրոնային հայցադիմումը էլեկտրոնային ստորագրվում է, Համակարգում վերջնական գրանցվում է էլեկտրոնային ստորագրված հայցադիմումը և ստեղծված գործը մտնում է շրջանառության մեջ:

2.2.2.2 Գործի ընդունումը վարույթ

Ստեղծված գործն ընդունվում է գրասենյակի աշխատակիցների կողմից, նշվում քաղաքացիական գործի դասակարգիչը և ավտոմատ կերպով մակագրվում դատավորին:

Մակագրվելուց հետո գործը հայտնվում է դատավորի էլեկտրոնային գործերի ցանկի մեջ: Նա կարող է կատարել հետևյալ գործողությունները՝

- գործն ուղարկել վճռաբեկ դատարան ընդդատությունը որոշելու համար,
- կայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում,
- կայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում,
- մերժել ընդունումը,
- կայացնել ինքնաբացարկի որոշում,
- պետ. տուրքի միջնորդությունը բավարարել և ընդունել վարույթ,
- պետ. տուրքի միջնորդությունը մերժել և հայցադիմումը վերադարձնել,
- գործը հետ վերադարձնել:

Դատավորը կարող է հայցադիմումը հետ վերադարձնել: Այդ դեպքում հայցվորը իր անձնական կաբինետ մտնելիս կարող է կատարել հետևյալ գործողությունները:

Հայցվորը կարող է նաև բողոքարկել դատավորի որոշումը, սեղմելով «Բողոքարկել» կոճակը:

Հայցվորը կարող է հայցադիմումը կրկին ներկայացնել, անցնելով նախկինում նշված քայլերը: Այդ դեպքում հայցադիմումը կրկին ընդունվում է և մակագրվում է դատավորին:

Երբ դատավորը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, ապա այն ծանուցվում է ընտրված կողմերին:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Հանրային գործը մտնում է կողմերի շրջանառության մեջ և սկսվում է նախապատրաստական փուլը:

2.2.2.2.1 Նախապատրաստական փուլ

Գործը վարույթ ընդունելուց հետո կողմերը «Գործողություններ» մենյուի կետից կարող են կատարել հետևյալ գործողությունները՝

Դատական ծախսերի վճարում պատուհանը սեղմելիս՝ բացվում է պատուհան, որտեղ մուտքագրվում է գումարի չափը, նշվում է վճարման նպատակը (պետական տուրքի վճարում կամ գործի քննության հետ կապված այլ ծախսեր), մուտքագրվում է վճարման ծածկագիրը և հաստատվում է, սեղմելով «Պահպանել» կոճակը:

Էլեկտրոնային
Դատավարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Իմ գործերը

Քաղաքացիական

Քաղ դիմումներ

Դատական ծախսեր

ԳՐԱԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Անձնական էջ

Ծանուցումներ

Գլխավոր / Իմ գործերը / Քաղաքացիական / Դիմում/0020/24

Քաղաքացիական

Դատական ծախսերի վճարում

← Վերադարձ

ԱՅՍՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՏԱՐԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄ:

Գումարի չափը*

Վճարման նպատակը*

Խնդրում ենք մուտքագրել այլ վճարային համակարգերով կատարած վճարումների ծածկագիրը կամ վճարել
առցանց և մուտքագրել ծածկագիրը :

Ծածկագիր*

Նշեք վճարողին*

ՄՈՅԱՆԺ ՆՊԸ (Պատասխանող)

Պահպանել

Չեղարկել

Պատասխանողը այդ ընթացքում կարող է, բացի հայցվորի կողմից կատարվող վերը նշված գործողություններից, կատարել նաև «Ներկայացնել հակընդդեմ հայց» և «Ներկայացնել պատասխան» գործողությունները:

Էլեկտրոնային Դատավարություն

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իմ գործերը

Քաղաքացիական

Քաղ. դիմումներ

Դատական ծախսեր

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սննդական էջ

Ծանուցումներ

Վերադարձ

Դիմում/0020/24

Հիմնական

Գործողություններ

Այլ հայցեր

Պատասխան

Դիրքորոշումներ

Նիստեր

Վարույթ ընդունելու մասին որոշում

Որոշման համար

Որոշման ամսաթիվը

Պարզեց

Որոշեց

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջների համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ներկայացվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200 և 361 հոդվածներով՝ դատարանը

1. Արթուր Գազիկի Սկրտչյանի ընդդեմ «ՄՈՅԱՆԺ» ՍՊԸ-ի Պահանջ պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Բողոքարկել

Դատական ծախսերի վճարում

Դատավորին հայտնել բացարկ

Հայտնել դիրքորոշում

Ներկայացնել ապացույց

Ներկայացնել դիմում/միջնորդություն

Ներկայացնել հավելորդում հայց

Նոր ներկայացուցիչ ներգրավել

Նոր փաստաթան ներգրավել

Պատասխան

Բոլոր այն գործողությունների կատարմանը, որոնք կարող են անել կողմերը, իրավասություն է տրվել նաև գրասենյակի աշխատակցին:

Կողմերը կարող են ցանկացած պահին դատավորին ներկայացնել բացարկ: Դրա համար լրացվում է բացարկի հիմքը, կատարվում են նշումներ և սեղմվում «Հիշել» կոճակը:

Էլեկտրոնային Դատավարություն

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իմ գործերը

Քաղաքացիական

Քաղ. դիմումներ

Դատական ծախսեր

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սննդական էջ

Ծանուցումներ

Քաղաքացիական

Գլխավոր / Իմ գործերը / Քաղաքացիական / Դիմում/0020/24

Դատավորին հայտնել բացարկ

Վերադարձ

Ամսաթիվ*

Դատավոր*

Այլ նշումներ

Բացարկի հիմքերը

Բացարկի հիմքերը

Բացարկի հիմք*

Ընտրել

* Ներկայացնող անձ

ՄՈՅԱՆԺ ՍՊԸ (Պատասխանող)

Փաստաթղթեր

Փաստաթղթի անվանում

Ամսաթիվ

Կարելի է, սեղմելով կապույտ վերնագրի վրա «+» նշանը, ավելացնել մի քանի բացարկի հիմքեր:

Օգտատերը մուտք գործելով իր էլեկտրոնային կաբինետ՝ իր գործերի մեջ տեսնում է այն գործերը, որտեղ նա հանդիսանում է պատասխանող: Բացելով այդ գործերը՝ նա կարող է ստեղծել իր էլեկտրոնային պատասխանը:

Քայլ 1-ում «Ավելացնել պատասխանող» կոճակը սեղմելիս բացվում է պատուհան, որտեղ մուտքագրվում են պատասխանողի տվյալները, իսկ համակարգը ավտոմատ ստուգում և վավերացնում է այն ՀՀ Ոստիկանության անձնագրային բաժնի և ՀՀ ԱՆ կազմակերպությունների ռեգիստրի հետ:

Պատասխանողին մուտքագրելուց հետո օգտատերը սեղմում է հաջորդ կոճակը, որից հետո անցնում է պատասխանի լրացնելու Քայլ 2-ին:

Երկրորդ քայլում օգտատերը ազատ տեքստային ռեժիմով համակարգ է մուտքագրում պատասխանի էությունը: Նկարագրական մասը շարադրելուց հետո սեղմում է էկրանի աջ ներքևի մասում գտնվող «Հաջորդ» կոճակը և անցնում Քայլ 3-ին:

Քայլ 3-ում օգտատերը մուտքագրում է փաստական հիմքերը և ամեն մի փաստական հիմքին կցված ապացույցները:

Քայլ 3-ում Համակարգը ավտոմատ բացում է «Փաստական հիմք 1» պատուհանը: «Ավելացնել փաստ» կոճակի օգնությամբ օգտատերը կարող է ավելացնել «Փաստական հիմք 2», «Փաստական հիմք 3» և այլն: Ամեն մի փաստական հիմքի մեջ կարող են շարադրել հիմքեր և հիմնավորումներ, որոնց կարելի է կցել ապացույցներ՝ ամեն մի փաստական հիմքի բլոկի մեջ աջ ներքևի մասում գտնվող «Կցել ապացույց» կոճակի միջոցով:

«Կցել ապացույց» կոճակը սեղմելուց հետո բացվում է համապատասխան պատուհան, որտեղ ընտրվում է ապացույցի տեսակը, տրվում է նկարագրություն և վերբեռնվում ֆայլեր: Այս գործողությունները կատարելուց հետո անրաժեշտ է սեղմել «Հաստատել» կոճակը, որով մուտքագրված ապացույցը կցվում է համապատասխան փաստական հիմքին:

«Հաջորդ» կոճակի միջոցով «Քայլ 4»-ին անցնելիս՝ մուտքագրվում են լրացուցիչ միջնորդություններ և գործին կցվում այլ փաստաթղթեր:


Այս գործողությունները կատարելուց հետո օգտատերը սեղմում է «Ավարտ» կոճակը, որի արդյունքում համակարգում վերջնական գրանցվում է էլեկտրոնային ստորագրված պատասխանը և մտնում շրջանառության մեջ:

Օգտատերը կարող է մուտք գործել «Պատասխան» մենյու և տեսնել իր կողմից մուտքագրված պատասխանը: Սեղմելով աղյուսակի այդ տողի վրա՝ օգտատերը կարող է տեսնել պատասխանի վերաբերյալ մանրամասնությունները:

Այժմ դիտարկենք էլեկտրոնային գործի մեջ պատասխանող կողմի հակընդդեմ հայցի տրամադրելու ժամանակ իրականացվող ընթացակարգը:


Օգտատերը մուտք գործելով իր էլեկտրոնային կաբինետ՝ իր գործերի մեջ տեսնում է այն գործերը, որտեղ նա հանդիսանում է պատասխանող: Բացելով այդ գործերը՝ նա կարող է ստեղծել իր էլեկտրոնային հակընդդեմ հայցը: Այն կառուցելու համար անհրաժեշտ է կատարել նկարում պատկերված յոթ քայլերը:

Բացի այդ քայլերը իրականացնելիս, կարելի է նաև էկրանի աջ վերևի մասում գտնվող կոճակների օգնությամբ հիշել տվյալները որպես սևագիր կամ չեղարկել սևագրի գործողությունները: Հակընդդեմ հայցի առաջին փուլի ներառական մասի կառուցման ժամանակ մուտքագրվում են գործով մասնակցող անձանց (կողմերի)՝ հայցվոր(ներ)ի և պատասխանող(ներ)ի տվյալները: Այդ գործողությունը իրականացվում են «Ավելացնել հայցվոր» և «Ավելացնել պատասխանող» կոճակների միջոցով:



Պատասխանողին մուտքագրելուց հետո օգտատերը սեղմում է հաջորդ կոճակը, որից հետո անցնում է հակընդդեմ հայցը լրացնելու Քայլ 2-ին:

Երկրորդ քայլով օգտատերը ազատ տեքստային ռեժիմով մուտքագրում է հակընդդեմ հայցի էությունը: Նկարագրությունը շարադրելուց հետո սեղմում է էկրանի աջ ներքևի մասում գտնվող «Հաջորդ» կոճակին և անցնում քայլ 3-ին:



Երրորդ քայլում օգտատերը լրացնում է հակընդդեմ հայցի պատճառաբանական մասը, որն իր հերթին բաղկացած է փաստական հիմքերից և ամեն մի փաստական հիմքին կցված

ապացույցներից: Այս քայլում ավտոմատ բացվում է «Փաստական հիմք» պատուհանը: «Ավելացնել փաստ» կոճակի օգնությամբ օգտատերը կարող է ավելացնել փաստական հիմքեր:

Կցել ապացույց

Տեսակ *

Գրավոր ապացույց

Նկարագրություն

GHEA Grapalat

Փաստաթղթի անվանում*

Ամսաթիվ

26/01/2024

☒ Հաստատում եմ, որ կցված փաստաթղթերը բնօրինակն են կամ պատշաճ վավերացված պատճեն

Բեռնել ֆայլեր

Դուք կարող եք բեռնել jpeg, jpg, png, pdf, doc, docx, mp4, webm, xlsx, xls ֆորմատի ֆայլեր, առավելագույնը 5 ֆայլ, յուրաքանչյուրը ոչ ավել, քան 10 MB

Հաստատել Չեղարկել

Ամեն մի փաստական հիմքի մեջ կարելի է շարադրել հիմքեր և հիմնավորումներ, որոնց «Կցել ապացույց» կոճակի օգնությամբ կարելի է ավելացնել ապացույցներ:

«Կցել ապացույց» կոճակը սեղմելուց հետո բացվում է համապատասխան պատուհան, որտեղ օգտատերը ընտրում է ապացույցի տեսակը, տալիս է նկարագրությունը և վերբեռնում ֆայլեր: Սեղմելով «Հաստատել» կոճակը՝ մուտքագրված ապացույցը կցվում է համապատասխան փաստական հիմքին:

Օգտատերը կարող է ավելացնել նաև իրավական հիմքեր:

Էլեկտրոնային դատավարություն

Գլխավոր / Իմ գործերը / Քաղաքացիական

Հանդիման հայց

Հիշել որպես սնազիր Չեղարկել սնազիր

1 Քայլ 1 Ներածական 2 Քայլ 2 Նկարագրական 3 Քայլ 3 Պատճառաբանական 4 Քայլ 4 Եզրականիչ 5 Քայլ 5 Այլ 6 Քայլ 6 Խնդրանքի հարցադրում... 7 Քայլ 7 Գրանցել

Անցնեցե՛ք պահանջ

Պահանջ

Բովանդակություն*

GHEA Grapalat

Պատասխանող

Սկզբունքային Արդարության Գաղափար

Այս գործողությունները կատարելուց հետո օգտատերը սեղմում է «Հաջորդ» կոճակին և անցնում «Քայլ 4» եզրափակիչ մասին:

«Քայլ 4»-ում օգտատերը մուտքագրում է իր պահանջները: «Ավելացնել պահանջ» կոճակով կարելի է ավելացնել մի քանի պահանջ: Ամեն մի պահանջի համար օգտատերը մուտքագրում է պահանջի բովանդակությունը և պատասխանողին, որին ընտրում է նախօրոք մուտքագրված պատասխանողների ցուցակից:

Այսպիսով օգտատերը կարող է մուտքագրել մի քանի պահանջներ, որոնց պատասխանող կողմերը կարող են լինել տարբեր անձիք:

Այս գործողությունները կատարելուց հետո օգտատերը անցնում է «Քայլ 5»-ին, որտեղ հնարավոր է մուտքագրել լրացուցիչ միջնորդություններ և գործին կցել վերաբերվող այլ փաստաթղթեր:

«Ավելացնել միջնորդություն» կոճակը սեղմելիս՝ օգտատերը կարող է ավելացնել միջնորդություններ, որոնք կցվում են հայցադիմումին:

«Ավելացնել միջնորդություն» կոճակը սեղմելով՝ բացվում է պատուհան որտեղ օգտատերը՝

- ընտրում է միջնորդության տեսակը,
- ընտրում է ամսաթիվը,
- մուտքագրում միջնորդության բովանդակությունը,
- ընտրում ներկայացվող անձին հայցվորների ցուցակից:
- մուտքագրում է փաստաթղթի անվանումը,
- ընտրում է ամսաթիվը,
- վերբեռնում է փաստաթղթի ֆայլերը,
- սեղմում «Հիշել» կոճակը:

Ավելացնել միջնորդություն

Տեսակ *

Ապացույց պահանջելու վերաբերյալ միջնորդություն

Ավելացնել

Համար*

U-2

Ներկայացման ամսաթիվ*

26/01/2024

Բովանդակություն*

GHEA Grapalat

A **B** *I* U 14 T

</> ↶ ↷

* Ներկայացնող անձ

ՄՈՅԱՆԺ ՄԴԸ (Հայցվոր)

Միջնորդության պատճենը պատասխանողին(պարտապանին) ուղարկելը հավաստող ապացույց

Փաստաթղթի անվանում

Ամսաթիվ

☒ Հաստատում եմ, որ կցված փաստաթղթերը բնօրինակն են կամ պատշաճ վավերացված պատճեն

«Քայլ 5»-ում դատական ծախսերի բլոկի մեջ «Վճարել» ընտրելիս բացվում է պատուհան, որի միջոցով իրականացվում է վճարումը: Կամ կարելի է այդ փուլում հետաձգել վճարումը՝ սեղմելով «Ներկայացնել միջնորդություն պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ» կոճակը: Կարելի է նաև, օրինական հիմքեր ունենալու դեպքում, նշել «Ազատված եմ պետական տուրքից»:

Էլեկտրոնային
Դատավարություն

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄ

Իմ գործերը

Քաղաքացիական

Քաղ. դիմումներ

Դատական ծախսեր

ՎԱՐՊԱՆՈՒՄՆԵՐ

Անձնական էջ

Ծանուցումներ

Քաղաքացիական

